

Եղվարդի ոռոգման համակարգի բարելավման ծրագրի

շրջակա միջավայրի վրա ազդեցության

գնահատման հաշվետվության վերաբերյալ

Եղվարդի ոռոգման համակարգի բարելավման ծրագրի ուղղությամբ կատարվող աշխատանքները շարունակվում են: Հոկտեբերի 10-ին Եղվարդ և Նոր Երզնկա համայնքերում տեղի ունեցան հանրային լսումներ Եղվարդի ոռոգման համակարգի բարելավման ծրագրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ, որին մասնակցում էին ներկայացուցիչներ ՏԻՄ-ից, ՋՕԸ-ից, Եղվարդի Օրիուս կենտրոնից, շահագրգիռ անձինք և բնակիչներ:

Հանրային լսումների օրակարգում էին ծրագրի ընդհանուր նկարագրի, շրջակա միջավայրի և սոցիալական նկատառումների հարցերը: Շրջակա միջավայրի նկատառումները հանգում էին հետևյալին՝ ազդեցությունները շինարարության փուլում, ադեցությունները շահագործման փուլում, դրական ազդեցություններ, միջոցառումներ արտակարգ իրաւճակներում, ջրամբարի բերրի հողաշերտի տեղափոխում: Սոցիալական նկատառումների թվում էին վերաբնակեցման և հողի օտարման մասշտաբը, սոցիալական-տնտեսական հետազոտության արդյունքները, փոխհատուցման շրջանակը, բողոքների լուծման մեխանիզմը և ծրագրի իրականացման և փոխհատուցման ընթացակարգը:

Հետազոտության սկզբում ներկայացվեց ծրագրի համառոտ նկարագրությունը.

Եղվարդի ոռոգման համակարգի բարելավման ծրագիրը նախագծվել էր նախորդ դարաշրջանի 70-ական թվականներին՝ Կոտայքի, Արագածոտնի եւ Արմավիրի մարզերի ոռոգման համակարգերը բարելավելու նպատակով: 1980-ականներին մեկնարկել են կառուցման աշխատանքները, սակայն շուտով դադարեցվել են՝ ֆինանսական խնդիրների պատճառով: Սեւանա լճի ջրի մակարդակի անկման, ինչպես նաև ջրային ռեսուրսների անհրաժեշտության հետեւանքով Ծրագիրը ենթարկվեց վերանայման: Արդյունքում, 2012 թ.-ի մայիսին, ՀՀ Կառավարությունը Ճապոնիայի Կառավարությունից հայցեց վարկային օժանդակություն: Ճապոնիայի Միջազգային Համագործակցության Գործակալությունը (ՃՄՀԳ կամ JICA) Հայաստան գործուղեց Ոսումնասիրող խումբ՝ Ծրագրի իրագործելիությունը գնահատելու համար, որի շրջանակներում 2015 թ.-ի հունիսի 15-ից սկսած կատարվել են մի շարք ուսումնասիրություններ: Ծրագրի իրագործող մարմինն է Ջրային Տնտեսության Պետական Կոմիտեն (ՋՏՊԿ), իսկ վերահսկող մարմինը՝ ՀՀ Գյուղատնտեսության նախարարությունը:

2015թ. հունիսից սկսած կատարվել են մի շարք աշխատանքներ՝ ուսումնասիրություններ, հանդիպումներ, իրազեկման սեմինարներ, այդ թվում հասարակական լուսմներ շրջակա միջավայրի վրա եւ սոցիալական ազդեցության գնահատման վերաբերյալ, որի նպատակն էր ծրագրի իրականացման արդյունքում բնապահպանական եւ սոցիալական կանխատեսվող ազդեցությունների վերլուծությունը եւ գնահատումը, ինչպես նաեւ դրանց նվազեցմանը եւ/կամ մեղմացմանը միտված գործողությունների/միջոցառումների հատկորոշումը՝ հաշվի առնելով տարածաշրջանի շրջակա միջավայրի առանձնահատկությունները եւ ազդակիր համայնքների սոցիալական իրավիճակը եւ պայմանները: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին ՀՀ օրենքը ընդունվել է 2014 թ.-ին: Նշված Օրենքի համաձայն ՇՄԱԳ նախնական գնահատման հայտը եւ հաշվետվությունը պետք է մշակվեն եւ ներկայացվեն բնապահպանության նախարարություն: Ծրագիրը դասակարգվում է որպես Ա կարգի:

Ծրագրի շրջանակներում նախատեսված է կառուցել ջրանցքներ եւ ջրամբար: Այս կառույցները միասին կկարողանան թիրախային տարածքն ապահովել բավարար եւ կայուն ոռոգման ջրով: Այդ պատճառով, ջրանցքներն ու ջրամբարը կդիտարկվեն որպես մեկ համալիր: Երբ ուսումնասիրվեն ծրագրի այլընտրանքները, ջրանցքների եւ ջրամբարի համալիրը կհամեմատվի այլ տարբերակների հետ: Ծրագրի նպատակը թիրախային տարածքի ոռոգման համակարգի բարելավումն է: Այդ նպատակին հասնելու համար ջրային ռեսուրսների երկու տարբերակ է դիտարկվում: Առաջին տարբերակը ոռոգման համար ստորգետնյա ջրերի օգտագործումն է, իսկ երկրորդը՝ մակերևութային ջրերի օգտագործումը, ներառյալ հալոցքաջրերը: Բացի այդ, ուսումնասիրվել է նաեւ «Զրոյական տարբերակը», երբ ծրագիրը չի իրականացվում: ՀՀ Կառավարությունը նախորդ դարաշրջանի 80-ականներից սկսած վերահսկում է Սեւանա լճից վերցվող ջրի քանակը: Բացի այդ, Կառավարության կողմից իրականացվել են Սեւանա լճի պահպանության ծրագրեր, ինչպիսին է Արփա եւ Որոտան գետերից ջրառ իրականացնելու համար թունելների կառուցումը: Արդյունքում, ջրի քանակը հասել է 38 մլրդ.մ3, սակայն, Կառավարությունը լճից բաց թողնվող ջրի տարեկան քանակը սահմանափակել է 170 մլն.մ3 չափով, բացառությամբ սակավաջուր տարիների: Եթե Ծրագիրը չիրականացվի, ապա թիրախային տարածքը նախկինի պես կախված կլինի Սեւանա լճից, որպես ոռոգման ջրի հիմնական աղբյուր: Դա կբերի Սեւանա լճի ջրի մակարդակի նվազման: Մյուս կողմից, երբ Սեւանա լճի ջրի մակարդակի պահպանության համար նվազեցվում է լճից ոռոգման նպատակով ջրի բացթողնման քանակը, ապա Ծրագրի թիրախային տարածքում գյուղատնտեսական արտադրությունը կարող է նվազել, քանի որ ոռոգման համար ջրի պահանջարկը չի բավարարվում:

Գնահատվել են Ծրագրի բաղադրիչների՝ ջրային ռեսուրսների օգտագործման, ջրամբարի վայրի եւ չափերի, հակահինֆիլտրացիոն շերտերի մի քանի այլընտրանքային տարբերակներ:

Եզրահանգվել է, որ ջրամբարի հատկորոշված տեղանքը ամենահարմարն է Հրազդան գետի ազատ ջրային հոսքերը պահեստավորելու եւ օգտագործելու տեսանկյունից: Ջրամբարի չափի պարագայում, մոտ 800 հա տարածք է հատկորոշվել, հաշվի առնելով նաեւ արդեն իսկ կառուցված պատվարները: Հակահինֆիլտրացիոն շերտի ընտրության հետ կապված, հուսալիության եւ ծախսատարության տեսանկյունից առաջարկվում է գրունտացեմենտի երկու շերտերի միջեւ տեղադրված բենտոնիտի գորգը:

Ծրագրի շահառու տարածքը 12,347 հա է, ներառելով Կոտայքի, Արագածոտնի, Արմավիրի մարզերը: Ծրագրի տարածաշրջանն ընդգրկում է 27 համայնք եւ տնօրինվում է 4 ԶՕԸ-ի կողմից, դրանք են. Եղվարդ ԶՕԸ, Աշտարակ ԶՕԸ, Վաղարշապատ ԶՕԸ եւ Խոյ ԶՕԸ: Նախատեսվում է ոռոգման ջրով ապահովել 12,347 հա տարածք, այն ինչ ներկայումս ծրագրի շահառու տարածաշրջանում ոռոգվում է 8,391 հա տարածք: Եղվարդի ջրամբարի տարածքը Եղվարդ համայնքում է, ջրանցքների շինարարության վայրը՝ Եղվարդ, Աշտարակ, Նոր Երզնկա համայնքներ, առկա ջրանցքների վերանորոգում եւ նախատեսում է, դրանք են Արզնի-Շամիրամ, Ներքին Ակնալիճ եւ Վերին Ակնալիճ ջրանցքները: Ներկայումս որպես ոռոգման աղբյուր շահառու տարածքում օգտագործվում է Սեւանա լճի եւ Հրազդան գետի, ինչպես նաեւ Մեծամոր գետից պոմպերով մղվող ջրերը:

Եղվարդի ջրամբարի համար ջրի հիմնական աղբյուրը հանդիսանում է Արզնի-Շամիրամ ջրանցքը: Հաշվի առնելով ջրանցքում ջրի որակական ցուցանիշները՝ ջրամբարում ջրի որակը կհամապատասխանի ոռոգման ջրին ներկայացվող պահանջներին:

Ծրագրի շահառու տարածաշրջանում ընդգրկված են 27 համայնքներ, որտեղ հիմնականում աճեցվում է ցորեն, բանջարեղեն, խաղող եւ միրգ: Ծրագրի իրականացումից հետո տարածաշրջանը կապահովվի կայուն ոռոգման ջրով: Ջրամբարի եւ դրա շուրջը գտնվող հողերը նույնպես օգտագործվում են գյուղատնտեսական նպատակներով (ցորեն, առվույտ, գարի, մրգատու այգիներ): Ազդակիր համայնքներն են՝ Եղվարդը, Նոր Երզնկան եւ մասամբ Աշտարակը: Ուսումնասիրությունների արդյունքում, թեև ջրամբարի կառուցմանը այդքան էլ չի առնչվում, այնուամենայնիվ փորձագետները պարզել են նաև, որ հնարավոր է, որ քիմիկատների եւ պարարտանյութերի կիրառումը կավելանա Ծրագրի իրականացման արդյունքում: Արգելված քիմիկատներ են նույնականացվել շահառու համայնքներում վերցված հողի նմուշներում, իսկ նիտրատների կոնցենտրացիան ստորգետնյա ջրերում որոշ տարածքներում բավականին բարձր էր: Անկախ Ծրագրի իրականացումից, անհրաժեշտ է Գյուղատնտեսության նախարարության հետ համատեղ հորդորել գյուղատնտեսությամբ զբաղվող անձանց կիրառել թույլատրելի քիմիկատներ եւ պարարտանյութեր: Ջրամբարի տարածաշրջանում չկան վայրի բնության տարրեր, քանի որ տարածքը մշակվում է եւ օգտագործվում է որպես արոտավայր Խորհրդային Միության ժամանակաշրջանից սկսած: Տարածաշրջանում նույնականացվել են վայրի բնության որոշ ներկայացուցիչներ՝ աղվես,

գայլ, արջ, տարբեր չվացող թռչուններ, սողուններ եւ այլն: Կան նաեւ ՀՀ Կարմիր գրքում եւ Բնության Պահպանության Միջազգային Միության Կարմիր ցուցակում ներառված որոշ վտանգված տեսակներ, սակայն դրանք հեշտությամբ կարող են բնակվել ջրամբարի տարածքի շրջակայքում: Բուսական աշխարհի վտանգված տեսակներ տարածքում չեն հատկորոշվել: Ծրագրով նախատեսված է պաշարել ջրամբարում 103 մլն. մ3 ջուր Հրազդան գետից եւ ուղղել այն Քասախ գետ: 28 եւ 15 ձկնատեսակներ են հատկորոշվել Հրազդան եւ Քասախ գետերում համապատասխանաբար: Ընդհանուր առմամբ, Հրազդան գետի ջրի մեծ մասը ուղղվում է դեպի ջրանցքներ ու էներգետիկ կառույցներ եւ միայն էկոլոգիական թողքն է մնում բնական հոսքում: Հրազդան գետի բնական հոսքում ձկնատեսակները կարողանում են գոյատևել, չնայած բավականին անբարենպաստ պայմանների:

Հրազդան գետի ջուրը հիմնականում օգտագործվում է ոռոգման եւ հիդրոէներգետիկ նպատակներով: Հայաստանում ոռոգումը ունի առաջնահերթություն՝ էներգետիկ գործունեության հետ համեմատ: Արգնի Շամիրամ ջրանցքի մոտ 320 մլն. մ3 տարեկան ջրի ծավալը արդեն իսկ հաստատվել է բնապահպանության նախարարության կողմից եւ Ծրագրի համար պահանջվող ջրի քանակը ներառված է նշված ծավալների մեջ: Մյուս կողմից, Հրազդան գետի վրա կառուցված Սեւան-Հրազդան կասկադի 7 ՀԷԿ-երից 4-ը գտնվում են Եղվարդի ջրամբարից ավելի ցածր հոսանքներում:

Ծրագրի իրագործումից կանխատեսվող հիմնական ազդեցությունները դիտարկվում են երեք փուլով՝ մինչ կառուցման մեկնարկը, կառուցման ընթացքում և շահագործման փուլում:

- Ազդեցություններ մինչ կառուցման մեկնարկը

Կառուցման աշխատանքներից առաջ անհրաժեշտ է իրականացնել հողի օտարում: Ընդհանուր առմամբ 743 հա հողատարածքի վրա զգացվելու է Ծրագրի ազդեցությունը: Դրանց մեծ մասը համայնքային են: Մոտ 28 հա հողատարածք, հիմնականում գյուղատնտեսական նշանակության հողեր, հանդիսանում են մասնավոր սեփականություն, որոնց օտարումը ենթադրում է ազդակիր անձանց համար փոխհատուցման տրամադրում: Ազդակիր տարածքում կան նաեւ աղքատ տնային տնտեսություններ, որոնք նպաստ են ստանում: Խորհուրդ է տրվում օգնել նրանց՝ ներգրավելով կառուցման աշխատանքներին: Շահառու եւ ազդակիր տարածքների միջեւ բավականին հեռավորություն կա եւ միջադեպեր այդ տարածքներում բնակվող մարդկանց միջեւ չի ակնկալվում: Եվ ընդհանրապես նման հարցերում Հայաստանում կոնֆլիկտային իրավիճակներ չեն եղել:

- Ազդեցություններ կառուցման ընթացքում

Կառուցման աշխատանքների իրականացման ընթացքում սպասվում է օդային եւ ջրային ավազանների աղտոտում, թափոնների առաջացում, աղմուկի մակարդակի բարձրացում,

ճանապարհների ժամանակավոր փակում եւ այլն: Անհրաժեշտ է կիրառել նշված ազդեցությունները մեղմացնող միջոցառումներ: Մակայն, հարկ է նշել, որ դրանք ժամանակավոր են, իսկ դրանց ազդեցության աստիճանը ոչ մեծ:

- Ազդեցություններ շահագործման փուլում

Ոռոգման տարածաշրջանի ընդլայնման հետեւանքով քիմիկատների ու պարարտանյութերի կիրառումը կմեծանա, ինչը կհանգեցնի հողերի ու ստորգետնյա ջրերը աղտոտմանը: Շատ կարելու է քարոզել թույլատրված պարարտանյութերի կիրառումը գյուղատնտեսության նախարարության անձնակազմի միջոցով եւ վերահսկել արգելված տեսակների օգտագործումը: Ջրամբարի տարածքում եւ դրա շուրջը նույնականացվել են կենդանական աշխարհի որոշ տեսակներ, որոնք սակայն կարող են վերաբնակվել ջրամբարի շրջակայքում: Հետեւաբար, Ծրագրի իրականացումից հետո կենդանիների համար գոյատեւման խնդիր չի առաջանա եւ նշանակալի ազդեցություն չի ակնկալվում: Մյուս կողմից, ջրամբարը կգրավի մի շարք չվացող ջրային թռչունների: Ծրագրի իրականացման արդյունքում 103 մլն. մ3 ջուր կվերցվի Հրազդան գետից, սակայն դա չի հանգեցնի նշանակալի հիդրոլոգիական փոփոխությունների, քանի որ գետի ջուրը արդեն իսկ կիրառվում է ոռոգման եւ հիդրոէներգետիկ նպատակներով: Նույնիսկ ստորին հոսանքներում գարնանային առավելագույն հոսքերը կպահպանվեն Ծրագրի իրականացումից հետո: Քասախ գետի պարագայում, արտահոսքերը կմեծանան, սակայն դա տեղի կունենա սահմանափակ տարածքում՝ ջրամբարից Քասախ գետ ներթողման կետից 14 կմ հեռավորության վրա եւ նշանակալի ազդեցություն չի ակնկալվում: Ծրագիրը կարող է նպաստել Սեւանա լճի ջրի պահպանմանը, սակայն, լճի մակարդակը էականորեն չի բարձրանա, միայն մի քանի սանտիմետր տարեկան կտրվածքով:

Անդրադառնալով շրջակա միջավայրի նկատառումներին հարկ է նշել, որ ազդեցությունները շինարարության փուլում կարող են արտահայտվել աղտոտման(օդ, ջուր, թափոն, հող, աղմուկ) և ճանապարհի փակման տեսքով: Աղտոտման հարցերը դիտարկելով օդի աղտոտման տեսանկյունից հնարավոր է փոշու առաջացում նյութերի տեղափոխման և շինարարական աշխատանքների արդյունքում: Ջրի աղտոտման դեպքում կարող է շինհրապարակից առաջանալ ցեխաջրեր և կեղտաջրեր: Թափոնների դեպքում հարցը վերաբերում է հողի մնացորդների և շինարարական թափոններին, իսկ վերջինը՝ ճանապարհի փակում շինարարական աշխատանքների համար: Այս ազդեցությունների մեղմացման համար նախատեսվելու են միջոցառումներ, ինչպես օրինակ՝ ջրի ցանում փոշու առաջացումից խուսափելու համար:

Եղվարդի ջրամբարի տարածքում եւ դրա շուրջը էկոհամակարգի եւ առաջարկվող ջրանցքների վերաբերյալ ուսումնասիրությունն իրականացվել է առկա գրականության եւ

դաշտային ուսումնասիրության միջոցով: Ինչ վերաբերում է կաթնասուններին, ոտնահետքերին, կենդանիների կերակրման հետքերին (ուտելիքի մնացորդ, կոճղեր եւ այլն), կենդանիների արտաթորանքին, բներին եւ անցքերին, ապա դրանք հստակեցվել են դաշտային ուսումնասիրության միջոցով: Սողունների, երկկենցաղների եւ միջատների վերաբերյալ տեղեկատվությունը/տվյալները ձեռք են բերվել գրականության եւ դաշտային ուսումնասիրության միջոցով: Բոլոր տեսակների համար դաշտային ուսումնասիրությունն իրականացվել է 15.09.2015 թ.-ից մինչև 07.03.2016թ.: Ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ տասը (10) կաթնասուն, 56 թռչուն, մեկ (1) երկկենցաղ, հինգ (5) սողուն եւ 36 միջատ: Թռչունների բազմազանությունը՝ համեմատած մնացածի հետ, ավելի հարուստ է, եւ Հայաստանի Կարմիր գրքում գրանցված է թռչնի չորս տեսակ: Բացի այդ, մեկ (1) տեսակ, մասնավորապես՝ գիշանգը (*Neophron percnopterus*) դասակարգվում է “Վտանգված” Բնության պահպանության միջազգային միության (IUCN) Կարմիր գրքում, որը նաև գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում: Բացի այդ, մեկ օձ՝ *Elaphe quatuorlineata* դասակարգվում է որպես “վտանգված” IUCN Կարմիր գրքում:

Կանխատեսվող ազդեցությունները.

- Ջրամբարի տարածքի ջրածածկման արդյունքում վայրի կենդանիները կկորցնեն իրենց ներկայիս բնական միջավայրը
- Մակայն, նրանց համար դժվար չի լինի տեղաշարժել ջրամբարի շուրջ այլ տարածքներ(կարմիր գրքում գրանցված բոլոր թռչնատեսակները չվող են), քանզի շրջակա տարածքն ունի նման պայմաններ:

Ջրամբարի տարածքի էկոհամակարգի վրա նշանակալի ազդեցություն չկա:

Ջրօգտագործման ազդեցությունների տեսանկյունից ձկնաբանական համակարգը դիտարկելիս՝ Հրազդան և Քասախ գետերում նույնականացվել է 28 ձկնատեսակ, ամբարակներն ու ՀԷԿ-երը հանդիսանում են ձկների միգրացիայի խոչընդոտ:

Կանխատեսվող ազդեցությունները ձկնաբանական համակարգի վրա .

- Վերին հոսանքում ձկների վրա ազդեցություն չի լինի(Արգնի-Շամիրամ ջրանցքից վերև գտնվող հոսանք),
- Կանխատեսվում է, որ միջին հոսանքում ձկների վրա էական ազդեցություն չի լինի, քանզի բնական գետի ջրերի ծավալն այս պահին սահմանափակ է,
- Կանխատեսվում է, որ ստորին հոսանքում ձկների վրա ուժեղ ազդեցություն չի լինի, քանզի հնարավոր է ապահովել ձվադրման համար անհրաժեշտ խորություն:

Ծրագրի կողմից ձկնաբանական համակարգի վրա էական ազդեցություն չկա և անհրաժեշտ է ապահովել նվազագույն էկոլոգիական թողք:

Ծրագրի իրականացումը ակնակալում է նաև դրական ազդեցություններ, դրանք են

- Եկամտաբերության բարձրացում կայուն ոռոգման հողօգտագործության միջոցով
- Էլեկտրաէներգիայի ծախսի խնայում՝ ոռոգման մեխանիկական եղանակից ինքնահոս եղանակի անցնելու շնորհիվ
- Սևանա լճի պահպանում՝ լճից դեպի խրագրի շահառու տարածք ջրի բացթողումը նվազեցնելով 50մլն մ3 չափով, (որը կբերի լճի ջրի մակարդակի տարեկան 4սմ-ով բարձրացման)
- Ջրամբարում կենսաբազմազանության ավելացում, որը կարող է հրապուրել թռչուններին
- Ստորգետնյա ջրային ռեսուրսի պահպանում՝ որպես ոռոգման ջուր օգտագործելով հալոցքային ջրերը:

Եղվարդի ջրամբարի պարագայում արտակարգ իրավիճակ կարող է հանդիսանալ պատվարի վնասումը հետեւյալ պատճառներով.

- 1) Հեղեղում ջրի մակարդակի՝ պատվարի բարձրության գերազանցման պատճառով,
- 2) Պատվարի քայքայում՝ պայմանավորված հիդրոդինամիկ ճնշման ազդեցությամբ,
- 3) Պատվարի ավերում:

Արտակարգ իրավիճակներում վնասի մեղմացման միջառումներ են նախատեսվում, այդ թվում Քասախ գետի երկայնքով և Նոր Երզնկա գյուղում տարհանման ազդարարման համակարգի տեղադրում և դեպի ստորին հոսանք ջրի վթարային բացթողում, որն ավելի շատ է քան ոռոգման ջուրը (այդ դեպքում, Քասախ գետի երկայնքով տեղի կունենա վարարում):

Ջրամբարի բերի հողաշերտի տեղափոխման, սոցիալական նկատառումների՝ վերաբնակեցման և հողի օտարման մասշտաբի, սոցիալական-տնտեսական հետազոտության արդյունքների, փոխհատուցման շրջանակի, բողոքների լուծման մեխանիզմների և ծրագրի իրականացման և փոխհատուցման ընթացակարգերի վերաբերյալ կետեր, վերլուծություններ ևս ներառված են հետազոտության մեջ:

Հարկ է նշել, որ հետազոտության մեջ նաև ներկայացված է շրջակա միջավայրի կառավարման պլանը, որտեղ կետ առ կետ ներկայացված են շրջակա միջավայրի վրա ազդեցությունների մեղմացմանն ուղղված միջոցառումների ցանկը՝ ըստ շրջակա միջավայրի հարաչափերի: Ծրագիրը նաև պարունակում է շրջակա միջավայրի կառավարման պլանի իրագործման վերաբերյալ մոնիթորինգ՝ նշված ազդեցությունների մեղմանն ուղղված

միջոցառումների արդյունքների, գնահատման և չափման համար՝ ծրագրում մանրամասն ներկայացնելով ազդեցությունների մոնիթորինգի մեխանիզմները:

Ամփոփելով կարելի է նշել, որ մեր երկրում ջրամբարային՝ ջրամբարաշինության քաղաքականությունը, ջրային ռեսուրսների, մակերևութային ջրերի կայուն կառավարումը բնապահպանական ոլորտի կարևոր գործառույթներից մեկն է համարվում: Այս կերպ կարող ենք խուսափել մի շարք բնապահպանական մարտահրավերներից, որոշակիորեն ազդելով շրջակա միջավայրի վրա ազդեցությունների մեղմացմանն ու ռեսուրսների խնայմանն ու օգտագործմանը: Եղվարդի ջրամբարի կառուցման ծրագիրը ևս կարող է նպաստել ջրամբարաշինության ոլորտի զարգացմանը, անմիջականորեն նպաստելով թիրախային տարածքի ռոռզման համակարգի բարելավմանը: Այն, որ նախնական գնահատումների արդյունքում պարզ է դարձել, որ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը շատ մեծ չէ և ծրագրում դրանց մեղմացմանն ուղղված միջոցառումները մանրամասն պլանավորված են, հաշվի առնելով նաև այն փաստը, որ ազդակիր համայնքներում հանրային լսումներ իրականացնելով թերևս դեռ հասարակության կողմից մտահոգություններ կամ նախագծի իրականացման վերաբերյալ առարկություններ չեն եղել, կարելի է ակնկալել, որ Եղվարդի ռոռզման համակարգի բարելավման ծրագրի իրականացման հաջորդ փուլերը ևս հաղթահարելի կլինեն:

ԵԱՀԿ բնապահպանական հարցերով փորձագետ՝

Ռուզաննա Մանյան

*Աղբյուր՝ “Եղվարդի ռոռզման համակարգի բարելավման ծրագրի շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման հաշվետվություն”*